

Մարդու :

Մարդուս փափագները այնչափ կը բաղմանան որչափ կը ջանայ զանոնք յագեցնելու : Խւրաքանչիւր քայլն որ կ'առնու՝ աչքերը նոր առարկայ մը կը տեսնան , որ մինչև այն ատեն չէր տեսած , և հազիւ թէ կը տեսնայ՝ մէկէն սիրտը անոր կը կապի : Ուր կը լմնայ պէտքը՝ հոն նորէն կը սկսի . և հազիւ թէ կը ստանանք բնութեան բոլոր պահանջը , նորէն շինծու ախորժներ մեզի կը յարուցանենք :

Մէկմէկու յաջորդող ազգաց պատմութիւնը այս է . մարդկային ուշադրութիւնը նոր առարկաներով կը զրաւուի . անոր կիրքերը նոր խորամանկութիւններով կը յուզուին . աշխարհիս տեսարանին վրայ նոր դերասաններ երևան կ'ելեն , և քիչ ժամանակի մէջ նոր աշխարհը մը չորս դին կը տեսնուի . նոր պաշտօնեայք աշխարհիս վարչութեան սանձերը ձեռք կը բերեն , և նոր դատաւոլք արդարութեան դահը կը բազմին :

Իմաստնոյ մը և յիմարի մը մէջ եղած տարբերութիւնն այս է . իմաստունն իր անձնական արդեամբքը կը ջանայ ինքզինքը փառաւորելու , յիմարը կ'աշխատի ապարդիւն փառաւորութեամբ ուրիշներուն յաղթելու : Իմաստունը հոդ կը տանի իր անձին պակասը լեցնելու . յիմարը իր առատարար ունեցածը կը հոդայ : Իմաստունը ինքզինքը երջանիկ կը զգայ երբ իր անձնական հաւանութիւնը արժանի կը զատէ ինքզինքը . յիմարը՝ երբ օտարաց ծափահարութիւնը կը նայ զողնալ :

Պէտքը չէ ո և իցէ մարդը՝ նմանելու օրինակ առնուլ մեզի . վասն զի լաւագոյն մարդն ալ իր պակսութիւնները ունի , որ անզգալի կերպով մերը կ'ըլլան մեր ունեցածներուն վրայ յաւելնալով : Մի հաւատար անոր որ ամեն բան կը գովէ . ևս առաւել անոր , որ ամեն բան կը պախարակէ , և ամենէն աւելի անոր որ ամենայն բանի անսարբեր է :

Այս կերպով աշխարհքս կը հիննայ : Հանդերձ որ այլեայլ ընկերական աստիւնանք կան , հանդերձ որ այլեայլ վիճակի մարդիկ կան , 'ի վերայ այսր ամենայնի ազգ մը կ'անցնի և ազգ մը անոր տեղ կը յաջորդէ : Աշխարհքս մնոտի է և անհաստատ . կեանքը դիւրասահ է և վաղանցուկ : Ե՞րբ մարդիկ անոր ճշգրիտ գաղափար մը ունենալու կարող պիտոր ըլլան : Ե՞րբ իրենց եղբարց թշուառութիւններէն խրատուելով կարող պիտոր ըլլան մարդասէր ըլլալու . Ե՞րբ իրենց անձնականոչնչութիւնը հասկնալով կարող պիտոր ըլլան իմաստուն ըլլալու և ինքզինքնին չափի մէջ բռնելու :

Բ.Ա.Ն.Ա.Լ.Ի.Ք

ԲՆՈՒԹԵԱՆ ԵՐԵՒԱՆԻԹԻՑ

(Տես Երես 189)

248 Ի՞նչպէս կըլլայ որ երբեմն կայծակը չէնքերը կործանելու ոյժ կ'ունենայ : — Կայծակը կը զարնուի շինուածքին ամենէն բարձր կէտերուն , ինչպէս են ծխահանք և զանգակատունք , և անկէց կըզարնուի շէնքին միջի երկաթէ կապերսւն և բանալիներուն վրայ . և երբ իր անցքին վրայ արգելք մը գտնէ՝ կը կոտրէ ճամբայ բանալու համար . քարերը և աղիւսները՝ որ շէնքերուն մէջ երկաթէ կապերուն միջոց կը գտուին՝ կը ջարդուին և կը քայքային :

249 Ինչո՞ւ համար կայծակը տեղէ տեղ կը նետուի , փոխանակ ուղիղ գիծով մը վազելու : — Վասն զի միշտ կ'ընտրէ իր ընթացքին մէջ լաւագոյն հաղորդիչները , և անոնց հասնելու համար աջ ու ձախ կը դառնայ :

250 Մըրկի ժամանակ տան մը որ մասին մէջ կենալը վտանգաւոր է : — Այն մասերուն մէջ որ տանիքին հետ հաղորդակցութիւն ունին հաղորդիչնիւթերու շարունակ գծով , որք ուղղակի գետնին վրայ չեն հասնիր . օրինակի համար կրակարանին մօտ :

251 Ինչո՞ւ համար կրակարանը չի կըրնար զկայծակը ինչուան գետին հասցընել : — Վասն զի ձեւացած է քարի կամ մարմարինի կտորներով , որոնք հաղորդական կարողութիւն չունին :

252 Կայծակը կըրնայ ցատքել կրակարանէն մէկու վրայ որ հոն մօտ գտուի : —